## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
## ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 25>> հունվար 2016թ. N 3

ք. Եղեգնաձոր

### ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՌԻԹԱՓ ԳՅՈՒՂԻ <<Ա. ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՍԱՄՎԵԼ ԳԱՌՆԻԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի <<թ>> ենթակետի, 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Ս. Աբրահամյանի հետ 2011թ. դեկտեմբերի 5-ին կնքված թիվ 201 աշխատանքային պայմանագրի 6.1-րդ կետի <<ժա>> ենթակետը, Հայաստանի Հանրապետության Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի ԱՎԴ4/0056/01/15 քրեական գործով 2015թ դեկտեմբերի 4-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը և Հայաստանի Հանրապետության դատախազության Վայոց ձորի մարզի դատախազության դատախազի 15.01.2016թ. թիվ 66/30քր-15 գրությունը՝

**Որոշում եմ**

1. 2016թ. հունվարի 25-ից լուծել Քառիթափ գյուղի <<Ա. Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Սամվել Գառնիկի Աբրահամյանի հետ 05.12.2011թ. կնքված թիվ 201 աշխատանքային պայմանագիրը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ